

կրորդ խորշը մատուռ մըն է յանուն Ս. Աստուածածնի, երրորդը զբեթէ ժայռի մէջ փորուած մութ տեղ մըն է, քանի մը մանր ու անկանոն խորշերու բաժնուած, ուր առանց լոյսի անհնարին է մտնել. և այս տեղն է Յովսէփ Արիմաթացիին զերեզմանը: Ըստ աւանդութեան, որովհետեւ այս սուրբ անձը իրեն համար փորած զերեզմանին մէջ Յիսուսը թաղելէ յետոյ փափաքեցաւ որ ինքն ու իր ընտանիքն ալ անոր Ս. Գերեզմանին մօտ տեղ մը թաղուին, սոյն խորշերը փորել տուած էր, և որոնց պատկան գետինը իր սեպհականութիւնն էր: Յիշեալ երեք մասերը որ Յովսէփ Արիմաթացի կը կոչուին՝ սեպհական են Հայոց, որոնք թոյլատրած են Ասորիներուն պատարագել Ս. Աստուածածնի սեղանին վրայ, երբ բաց է Ս. Յարութեան մեծ դուռը: Մերայինք կը պատարագեն ե՛րբ որ ուզեն (Ո. Ս. Տ. էջ 61-62):

#### ԺԳ. ՈՒՇԱՅԱՓՄԱՆ ՏԵՂԻ ԵՒ ԻՒՂԱԲԵՐԻՑ ՍԵՂԱՆ

Պատանատեղիէն դէպի արեւմուտք յառաջանալով քսան քայլաչափ, կը գտնուի Ուշարատիւնս տեղին: Ըստ աւանդութեան, Ս. Կոյսն Մարիամ այս տեղէն տեսնելով առաջին անգամ իր միածին Որդին խաչին վրայ բարձրացած, ուշաթափ մարեցաւ և հետն եղող սուրբ կանանց թեւերուն վրայ ինկաւ: Կամ ըստ ուրիշ աւանդութեան՝ այստեղ կայնած էին սուրբ կիներ, երբ Յովսէփ եւ Նիկողիմոս Գրիստոսի սուրբ մարմինը մաքուր կտաւներով կը պատէին: Յիշեալ տեղը Հայոց կը պատկանի, երկաթէ բոլորակ ճաղով շրջապատուած ու վրան ջահ մը կախուած (Ո. Ս. Տ. էջ 55-56):

Իւղարերից սեղանը յիշեալ տեղէն քանի մը ոտք